

ՊԱՇՏԱՍՈՒՆՔԱՅԻՆ ՏԱՐԻԵՐԸ «ԱԼԵԼՈՒՅԱՅԻ» ԱՐՑԱԽՅԱՆ
ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐՈՒՄ

ՍՎԵՏԼԱՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

«Ալելույաները» Քրիստոսի ծնունդն ավետող ծիսական երգեր են, որոնք կատարվում էին Մենդյան ճրագալույցի երեկոյան: Այդ օրը պատանիները խումբ-խումբ պատվում էին գյուղում, բարձրանում այս կամ այն տան կտուրը և խմբից մեկը երգում էր «Ալելույա» փոխարենը ստանալով մի թղթ և քաղցրավենիք: Նման սովորություն է եղել Աշտարակում, Էջմիածնում, Ղազախում, Կիլիկիայում և այլուր: Այդ երգը Նոր Նախիջևանում, արևմտահայ որոշ շրջաններում հայտնի է «Ավետիս» անվամբ: 1967թ. Լեռնային Ղարաբաղի Հազրութի շրջանի Տումի գյուղում, Սոնա Օհանյանից, մեր կողմից գրառվել է «Ալելույա»-յի մի տարբերակ, որն իր բնույթով թեև համընդհանուր գծեր ունի Հայաստանի պատմագագազրական այլ շրջաններից գրառված «Ալելույա-Ավետիսների» հետ, սակայն բովանդակային առումով այն փոքր-ինչ տարբերվում է դրանցից: Երգն ամբողջապես կառուցված է հնօրյա ծիսահավատալիքային մտածողության շրջանակներում: Այն իր ավանդական ակունքներով կապված է հայոց, մասնավորապես Արցախի հնօրյա հավատալիքների, պաշտամունքային առարկաների ու երևույթների հետ: Ի դեպ, վերոհիշյալ տարբերակը գրառելուց հետո մեզ չհաջողվեց ո՛չ բուն Արցախում և ո՛չ Հայաստանում բնակվող արցախցիներից գրառել որևէ այլ տարբերակ: «Արարատ»-ում մեզ հանդիպեց նույն երգի 4 տարբերակ՝ «Ղարաբաղի ջրօրհնեաց երգեր» վերնագրով: Գրառողն ըստ տեղավայրերի է տարանջատել երգերի տարբերակները. «Վարանդա գավառի Ավետարանաց և Ճարտար գյուղերի շրջակայքից», «Խաչեն գավառի Առաջածոր գյուղի շրջակայքից» և «Դիզակի գավառի Հազրութի շրջանի շրջակայքից»: Գրառողը կոնկրետ գյուղը հիշատակելուց բացի, նշել է նաև «շրջակայք» բառը, հավանաբար շրջակա գյուղերում դրանց կենցաղավարման իրողությունը հավաստելու նպատակով: Բնագրերի վերջում զետեղված են գրառողի անվան սկզբնատառերը՝ Դ + Վ: Դա Դադյան Խաչիկ Վարդապետի ստորագրությունն է: Գրառողը բնագրերին կից նշել է աղբյուրագիտական արժեք ներկայացնող մի շարք ծանոթագրություններ կապված «Ջրօրհնեքի» երգերի կենցաղավարման տարաբնույթ դրսևորումների հետ: «Ղարաբաղի ժողովրդական Ջրօրհնեաց երգերը, - գրում է գրառողը, - այնքան շատ են ու բազմազան, որ եթե յուրաքանչյուր գյուղի վարիանտները ժողովեն, հավաքվեն, հատորներ կկազմվի: Առայժմ Ղարաբաղի յուրաքանչյուր գավառից մի-մի նմուշ ենք ներկայացնում»¹: Նշված փաստը վկայում է, որ Ղարաբաղում հիշյալ երգերը շատ տարածված են եղել և աչքի են ընկել տարբերակային բաղմա-

1 «Արարատ», 1895, №11, էջ 471:

զանուլթյամբ: Գրառողի մի այլ վկայությունը բացահայտում է վերոհիշյալ երգի կատարման հետ կապված կենցաղասովորություններն այլ մանրամասներ. «Վարանգյում սույն երգը երգելիս այսպես են անում. 3 հոգի վեր են բարձրանում կտուրը, հերթին (երգիկին) կանգնում, երկու հոգի պըկօ (չվի) են ածում, իսկ մինը ճրագը ճվարանով (կողով) կախ է անում և երգում: Երգից հետո բաժին է ստանում ձու, եղ, բրինձ, ալյուր, աղ, չիր, փող»²: Գրառողի մի այլ վկայությունը պարզվում է, որ հիշյալ երգերն Արցախում այնքան տարածված ու սիրված են եղել, որ նույնիսկ «Դիզակում հայերը թուրքերի գյուղերում, թուրքերը հայկական գյուղերում երգում էին «Ալեկույայ»³: Գրառողը հայատառ թուրքերենով հրատարակել է նաև վերոհիշյալ երգը «Արելուջա, Արելուջա» տարբերակով: Այսպիսին է բանահյուսության բնույթն ու կուլթյունը. ապրելով կողք կողքի, անգամ այլազանական ժողովուրդները լսելով միմյանցից ժողովրդական ստեղծագործություններ, թարգմանում են, յուրացնում, որը պատճառ է դառնում նյութերի տարածմանը, մի ազգից մյուսին փոխանցմանը: Ժամանակի ու տարածության գործոնի ներազդեցությունը բնագրերի ներքին կառուցվածքի և բովանդակության վրա տեսանելի դարձնելու նպատակով, ստորև ներկայացնում ենք նույն տեղավայրից՝ Հաղրուլթի շրջակայքից մոտ 80 տարվա վաղեմությունը իրարից հեռացած 2 տարբերակներն ամրոջըլությամբ:

1895թ. Խաչիկ Վարդապետ Դադյանի գրառումը.

Ասոր ծումա, ծումում կացեք, ալելույա,
 Ուրախացեք, օր ցնծացեք, ալելույա,
 Պարավ, պարավ էս տաճարս, ալելույա,
 Հազար պարավ էս տաճարս, ալելույա,
 Ասոր ծնունդ մեր Մայրամա, ալելույա,
 Ծրծխոխ^I բերավ յուր խաչ որդին, ալելույա,
 Հրներակ^{II} քեզ, Հուռումսիմա, ալելույա,
 Քրիստոծր պըտըտեցեր^{III}, ալելույա,
 Հրներակ քեզ, պելի^{IV} Վանես^V, ալելույա,
 Քրիստոծր խըտըտեցեր, ալելույա,
 Հրներակ քեզ, գետ Վարգանան^{VI}, ալելույա,
 Քրիստոծր մկըտեցեր, ալելույա,
 Օղորմի քեզ Հուռումսիմա, ալելույա,
 Քրիստոծր ուրուրեցեր, ալելույա,
 Տնօխնորը^{VII} չթամամեց, ալելույա,

² Նույն տեղում, էջ 469:

³ Նույն տեղում, էջ 472:

I Ծրծխոխ – նորածին

II Հրներակ – երանի

III պըտըտեցեր – բարուրեցիր

IV պելի – կնքահայր, քավոր

V Վանես – Հովհաննես Մկրտիչ

VI Քրիստոսի մկրտության գետը՝ Հորդանանը:

VII Տնօխնորը – տնօրհներ:

Մանուկըման խըսուցրեն, ալելույա,
Աջի ձեռին Ավետարան, ալելույա,
Ջախի ձեռին սաղմոսարան, ալելույա,
Այիբբենը, որ կյիրեցեն, ալելույա,
Առավ կարթից սաղմոսարան, ալելույա,
Սաղմոսարան, որ կյիրեցեն, ալելույա,
Առավ կարթից ավիտարան, ալելույա,
Ավիտարան, որ կյիրեցեն, ալելույա,
Առավ կարթից շար շարական, ալելույա,
Մինավ կյիրար, մինավ ճինջար, ալելույա,
Ոննը^{VIII} փոխար, ծաղեկ ցնծար, ալելույա,
Իւրուր ցօնեք իւրուր եկեն, ալելույա,
Իւրուր եկեն, կեյնի շըմեն, ալելույա,
Ուհան^{IX} մունթը^X քըրըհեցեն, ալելույա,
Ջուրու Մերիամ ըղըրկեցեն, ալելույա,
Մերամ եկավ լալով - լալով, ալելույա,
Լալով - լալով, մղկտալով, ալելույա,
Ոննր փոխից՝ արյուն հողաց, ալելույա,
Փոնջ մնեչակ հետեն սողաց, ալելույա,
Եկ, տերը տար, քու խաչ որդին, ալելույա,
Էս անում չի մեզ մըրթեթին, ալելույա,
Ես վար կանիմ առանց հեթին, ալելույա,
Հոգիտ կոչիմ աըքայուլթիւն, ալելույա,
Եկ քեղ տանիմ Երուսաղեմ, ալելույա,
Երուսաղեմ քաղաքը շինիմ, ալելույա,
Շատ կաղ ու կուր ըպրցնիմ, ալելույա,
Կըվաղանը խըրըցնիմ, ալելույա,
Կըթնախըյուրը^{XI} փլխցնիմ^{XII}, ալելույա,
Տնատաըը կուշտըցնիմ, ալելույա,
Շոուն կյաս կտիներս, ալելույա,
Սառալ ա տրեխներս, ալելույա,
Ջիր ու չամիչ իմ ճոտերս, ալելույա,
Եղեր, մեղրեր իմ մոնթերս, ալելույա,
Թուրունն^{XIII} ա հեն եղցե, ալելույա,
Ծոխն ա հում ըուրուղում^{XIV}, ալելույա,
Պածերն^{XV} ա հեն աստղեր, ալելույա,
Պողերն ա հեն լուսնինգյա, ալելույա,
Հացերն ա կյործած խաչեր, ալելույա,

VIII Ոննր - ոտքը

IX Ուհան - Հովհաննես

X Մունթը - մոնթ, աշակերտ

XI Կըթնախըյուրը - բարուրաչոր

XII փլխցնիմ - պատուեմ

XIII Թուրունն - թոնիր

XIV ըուրուղում - մետաքս

XV պած - կայծ

Կուտանան^{XVI} ա թառ^{XVII} ըզոնեկ^{XVIII}, ալելույա,
Ծհանն^{XIX} ա ոսկե շիշակ^{XX}, ալելույա,
Հացթոխն ա, փոնջ մընեշակ, ալելույա,
Տունը շեն, տունը շեն,
Ձեր տղորցը անուամը հի՞նչ ա,
Ծառ տանի, ծյանի,
Ճեղնը տան, տերև հանի
Գետեն նման ըրկընանան,
Ավազգեն նման շրտանան,
Քրիստոծեն գանձանակը,
Ձեր աղոցը չսրը տանայ:

1967թ. մեր կողմից գրառված տարբերակը.

Ալելույա, Ալելույա,
Եկեք էս տոնը, պարավ եկեք,
Ճրօխնեք ա, ճիրավ լիգյնը,
Սուներն ա տաշած վեսկե,
Փըռավանն ա, փռփռում ա,
Ծոծն ա ծալած ղումաշ,
Հուրթն ա պուլուր լուսնընգյա,
Ծոխն ա հում բուրուշում,
Թուրնըն ա պուլուր յեղցե,
Պողերն ա վառ - վառ աստղեր,
Հացթոխն ա օծած խաչեր,
Ծհանն ա վեսկե շուշակ,
Կուտանան ա թառ - թառ ղոնեգյ,
Օխտր ախպեր նստին մին սեղանու:
Օտին, խմին, կետեն նման իրկընանան,
Ըվազգեն նման շրտանան,
Տոնը շեն, տոնը շեն,
Քաշ, կռակլավ գուշման ա,
Աշկը հանե մին արասե:

Առաջին իսկ ընթերցումից պարզորոշ զգացվում են 80 տարիների ընթացքում բնագրերում կատարված ծավալային ու որակական փոփոխությունները: Նման փոփոխությունները պայմանավորված են մի շարք առարկայական հանգամանքներով: 1895թ. գրառումներին կից ծանոթագրություններից պարզվում է, որ վերոհիշյալ երգերը երգվել են բուն տոնածիսական արարողություններին զուգընթաց, այսինքն, աոնը ուղեկցվել է երգերով: Տոնի խորհրդավորությունն առանձնակի լիցք է

XVI կուտանա – կուտ գնացած հաց
XVII թառ – շատ սպիտակ
XVIII ըզոնեկ – աղավնի
XIX Ծհան – ախիշ
XX շիշակ – վզիկ

Հաղորդել մարդկանց, սիրով ու ջերմությամբ համակել նրանց զգայական աշխարհը և նպաստել ստեղծագործական գործընթացների վերելքին. վերահիշյալ բնագրում զգացվում է վիպերգերի հորինումներին բնորոշ ավանդույթների վերարթնացման միտում:

1967թ. բնագիրը հաղորդելիս, բանասացը չէր հիշում տոնի հետ կապված արարողությունները: Այսինքն, երգը կտրվել է բուն ծեսից և ժամանակի ընթացքում, բանասացի բերանում, գոյատևել մեխանիկական վերարտադրմամբ: Բնագրերի համադրումից պարզվում է նաև, որ XIX դ. վերջերին նորկտակարանային սյուժեները շատ տարածված, ընդունված, սիրված ու հոգեհարազատ են եղել արցախահայոց մեջ, դրանք բացակայում են մեր գրառած (1967թ.) տարբերակում:

«Ալեյուլայի» արցախյան տարբերակներում մեկտեղված են հեթանոսական ու քրիստոնեական ծիսահավատալիքային մտածողության տարրերն իրենց տարաբնույթ դրսևորումներով.

Ալեյուլայ, Ալեյուլայ,
Եկեք էս տոնը, պարավ եկեք:

Կամ

Ասոր ծում ա, ծումում կացեք,
Ուրախացեք, օր ցնծացեք,
Պարավ, պարավ էս տաճարս,
Հազար պարավ էս տաճարս

Հրավերք բարեմաղթանքների նպատակն է՝ ամենամյա բերք ու բարիքից հյուրասիրելով, բաժին հանելով, սկսվող նոր տարվա բարեհաջողության հիմքերն ամրագրել⁴: Բանաստեղծական պատկերավորման և հին պաշտամունքների առումով, խիստ ուշագրավ են մանուկների այցելած տան նկարագրության մանրամասները: Առաջին հերթին աստվածային ծննդի ավետման ենթակա տունը համեմատվել է սրբազան տաճարի հետ, որի սյուները ոսկուց են, երգիկը բոլորակ լուսին: Այսինքն, ավետման զորությամբ ամեն ինչ շքեղ է, տոնական.

Ծրօխնեք ա ճիրավ լիդյնը,
Սուներն ա տաշած վեսկե,
Հուրթն ա պուլուր լուսնընդյա,
Փըռավանն ա, փուխեում ա

Այստեղ բացահայտված են տոնականորեն զարդարված տաճարներում աստվածների պատվին կատարվող տոնածիսական արարողությունների հնօրյա արձագանքները: Երգում հնչող յուրաքանչյուր բանաստեղծական պատկեր, համեմատություն, փոխաբերություն, մակդիր խորհրդանշական, պաշտամունքային իմաստ ունի: Բուրվառից դուրս եկած ծուխը հում «բրուշումի» (մետաքսի) է նման, թոնիրը՝ «պուլուր եղցու» (կոր եկեղեցու), հացթուխը՝ «փոնջ մանիչակի», հացերը՝ «օձած», մի այլ տարբերակում՝ «կյործած» (հյուսած) խաչի: Այլաբանորեն ներկայացված բանաստեղծական պատկերները իրական են, առարկայական, շոշափելի, միաժամանակ փոխկապակցված երկնայինով: Երկրայինն ու երկնայինը համա-

⁴ Բարեմաղթանքների վերաբերյալ մանրամասները տես՝ Ս. Հ ա ղ ու թ յ ու ն - յ ա ն. Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ. Երևան, 1975, էջ 235-241:

ձուլյ միասնությունը պայմանավորված են իրարով՝ համակված տիեզերական ամբողջության գաղափարով: Պտղաբերություն, արգասավորության անձնավորումներ համարվող լուսինը, աստղերը, ջուրը, կրակը, ծովը, բույսերը ներքին սերտ աղբյուրներով խորհրդանշում են աշխարհի ու մարդկանց առարչի, երկնքի ու երկրի տիրոջ ծնունդը: Մարդկանց հնօրյա պատկերացումներում երկնայինի ու երկրայինի սերտ մերձեցմամբ են ծնվել աստվածները (Վահագնի ծնունդը): Եթե երգի առաջին մասը խորհրդանշում է աստծո ծնունդը համակված տիեզերական հրճվանքով ու ուրախությամբ, ապա երկրորդ մասը նրա մահն ու հարությունը՝ «իրականացված» տան հարակից պաշտամունքային մի ինքնատիպ համալիրում թոնրում: «Թոնրն ա պուլուր եղցե» հիշատակումը բնագրերում վկայությունն է այն իրողության, որ թոնիրը Հայաստանում, իբրև տան կրակարան, օջախ, սուրբ է համարվել, այն եկեղեցուն հավասար է դասվել⁵: «Թոնրի շուրջը կնունք ու պսակ է արարվել, ինչպես եկեղեցում»⁶: Թոնրի և եկեղեցու կապն է խորհրդանշում հետևյալ հանելուկը.

Փոքրիկ եկեղեցի,
Չոքեցի թխեցի⁷:

Թոնիրը խորհրդանշում է նաև անդրշիրիմյան աշխարհի ու երկրի կապը: «Հայերը հավատում են, որ յուրաքանչյուր ընտանիքի նախնիները բնակվում են թոնրի շրթան կամ թոնրի ակում»⁸: Երգում հնչող թոնրի հետ կապված յուրաքանչյուր բանաստեղծական պատկեր, համեմատություն խորհրդավառապատկան իմաստ է արտահայտում: «Հացթոխն ա փոնջ մանիչակ» առղը խորհրդանշում է պտղաբերության, արգասավորության, բերք ու բարիքի, հացահատիկը հովանավորող Մայր աստվածուհուն, որին հացահատիկի փնջեր էին նվիրում: Մայր աստվածուհու հատկանիշները կրող Աստվածածինը, ամենայն հավանականությամբ, հենց «Հացթոխն» է «փոնջ մանիչակ»: Մանուշակը հավանաբար նրա նվիրական ծաղիկն է: Դրա հավաստմանը հիմք կարող է ծառայել նաև 1895թ. տարբերակում հնչող հետևյալ քառատողը.

Մերամ եկավ լալով, լալով, ալելույա,
Լալով, լալով, մղկտալով, ալելույա,
Ոննը փոխից արյուն հողաց, ալելույա,
Փոնջ մնեչակ հետեն սողաց, ալելույա:

Նրա թխած հացում «օծած», մի այլ տարբերակում «կյործած» խաչն է հանգրվանել: Հացի մեջ հանգրվանած խաչը մարդկության բարեկեցության համար ղոհաբերված նրա որդին է՝ խաչված Քրիստոսը⁹, որի մար-

5 Մ. Աբեղյան. Երկեր. 4, էջ 15:

6 Դ. Վ. Կարամյան. Հայոց ժողովրդական բնակարանը (գլխատուն, սրբարան), Հայոց սրբերը և սրբավայրերը. Երևան, 2001, էջ 357:

7 Ս. Հարությունյան. Հայ ժողովրդական հանելուկներ. Երևան, 1965, էջ 146:

8 Մ. Աբեղյան. նշվ. աշխ., էջ 15:

9 Քրիստոսի մարմինն ու արյունը սիմվոլացնող հացի ու գինու հնագույն պաշտամունքի մանրամասներ տես՝ Ս. Հարությունյան. Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ, էջ 230-235: С. Б. А р у т ю н я н. Реликты

մինն, ըստ քրիստոնեական սիմվոլիկայի, խորհրդանշում է Հացը: «Կուտանան ա թառ - թառ դոնեգ» տողը ևս խորհրդապաշտական իմաստ ունի: Սրա հիմքում ընկած է առաջինի, առաջին պտղի զոհաբերության Հավատքը, որը տարաբնույթ դրսևորումներով կենցաղավարվել է Հայոց բանավոր ավանդության մեջ ու ժողովրդական սովորություններում: Դրա վկայություններն է՝ «Առաջին Հացը միշտ կուտ է գնում» առածը: Գյուղերում Հաց թխելիս, սովորաբար, առաջին Հացը առաջին սլատահած մարդուն են տալիս կամ շանը: Հողագործը սերմը ցանելիս առաջին մի քանի բուռը նետում է Հողի մեջ ասելով. «Էս մինը ծտերեն, էս մինը մկներեն» և այլն: Այսինքն, առաջինի զոհաբերությունը նպաստում է նրանից Հետո եկողի անմանն ու բազմացմանը: «Կուտանան» կուտ գնացած Հացը, Քրիստոսի տառապած մարմնի խորհրդանշան է, իբրև մարմնի ոչնչացում՝ Հանուն Հոգու փրկության, այսինքն՝ Հանուն կյանքի վերածնության, Հարատևության: «Կուտանայի» աղավանակերպ ընկալումը վկայությունն է այն Հավատքի, որ սուրբ Հոգին աղավանակերպ է իջել Քրիստոսի վրա: Այս ամենի հիմքում ընկած են մեռնող և Հարություն առնող աստվածության գաղափարները: Թոնրի ակը, ըստ ժողովրդական Հնագույն Հավատքի, ոչ միայն նախնիների բնակավայր է Համարվել, այլև «չար ոգիներին»¹⁰: Թոնրից վեր բարձրացող «կրակի պածերը» (կայծերը) վառ-վառ աստղերի, մի այլ տարբերակում «պողերը պուլուր» «լուսնինգյայի» հետ Համեմատությունները խորհրդանշում են ոչ միայն մահվան դեմ կյանքի Հաղթանակը, այլև Հոգու սերտ Հարաբերությունը երկնային լուսատուների, մասնավորապես՝ աստղերի հետ: «Աստղի փայլը նման է իրեն պատկանող Հոգու փայլին, որքան մաքուր է Հողին, նույնքան մաքուր է աստղը»¹¹: Այդ «վառ-վառ աստղերը» Քրիստոսի Հոգու լույսերն են: Արդար Հոգին միշտ լուսավոր է պատկերացվում ժողովրդական ընկալումներում: Դրա դրսևորման վկայությունն են բարի Հիշատակ թողած Հանվուցյալի Հասցեին ուղղված «Հոգին թող լուսավորվի» կամ «գերեզմանես լուս իջնի» բարեմաղթանքները: Մահվան ու Հարության շրջապտույտին մասնակցում են ոչ միայն երկնային լուսատուները, այլև թոնրին առնչվող այն պարագաները, որոնք ըստ ժողովրդական մտածելակերպի՝ Հմայական զորություններ են օժտված: Դրանք են «վեսկե շիշակ» (վզիկ) «ծհանը» և Վարանդա գավառի Ավետարանոց գյուղի տարբերակում Հնչած «քաշկու մաններ» «ծկոտեչը»¹²: «Ծհանը» երկաթյա կեռ ծայրով ձող է, որով թոնրի պատից Հանում, պոկում են թխված Հացը: «Ծկոտեչը» վայտյա սուր մագիլներով գործիք է, որով գրտնակած Հացի կենտրոնական մասը, մինչև թոնիր իջեցնելը, 3 անգամ ծակում են, որպեսզի այն չվիքի, կուտ չգնա: Ըստ հին Հավատքի, Հար ուժերի դեմ պայքարելու Հոգր միջոց է երկաթը (ծհանը), քաջքերը, սատանաները նրանից վախենում են: Ուշագրավ է, որ Հնայած «քաշկու մաններ» անվանը, «ծկոտեչը» ևս Հացը ոչնչացումից

благословений при общественном жертвопоедании. — «Պատմա-բանասիրական Հանդես», 1971, № 3, էջ 256–262:

10 Մ. Ա բ ե դ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 59:

11 Նույն տեղում, էջ 28:

12 «Արարատ», էջ 469:

փրկելու հատկութեամբ է օժտւած: Սրա հիմքում ընկած է ժողովրդի մեջ տարածված նմանողական հմայութեան այն հավատքը, թե չարի դեմ պայքարելու միջոց կարող է ծառայել հենց չարը մարմնավորող մի այլ հզոր ուժ: Նմանողական հմայութեան գրականության վկայութիւններէն է արցախահայոց մեջ տարածված «Ասեղով ծակողին մըխաթով բիդի ծակիս» առածը: Հմայական իրերին, առարկաներին ու երևույթներին զուգակցվել են և հմայական խոսքերը: Երգի երրորդ, վերջին մասն ավարտվում է օրհնանք-բարեմաղթանքներով ու անեծքներով: Դրանց հիմքում ընկած է խոսքի գերբնական գորութեան հնօրյա հավատալիքը: «Անեծք-օրհնանքները, — գրում է Սարգիս Հարությունյանը, — ունեն իրենց մեջ արտահայտված ցանկութեան իրագործման գերբնական հնարավորութիւն, հետևաբար և հմայական ներգործման անկասելի գորութիւն»¹³: Երգն ավարտվում է մարդկանց թշնամի չար ուժերից «Քաշ - կռակլավից» հեռու մնալու նախազգուշական խոսքերով.

Քաշ կռակլավ դուշման ա,
Աշկը հանե մին արասե:

Հայաստանի պատմագագազգրական տարբեր շրջաններից, տարբեր ժամանակներում գրառվել են բազմաբնույթ ու բազմաբանակ «Ալեւոյայ-Ավետիաների» տարբերակներ: Դրանք կուտակված են արխիվային ֆոնդերում, ցրված պարբերական մամուլի տարբեր էջերում, ժողովածուներում: Բավական մեծ հավաքածու ունի և ԳԱԱ թղթակից անդամ Սարգիս Հարությունյանը: Անհրաժեշտ է գրանց մեկտեղումը, համահավաք ժողովածուի ստեղծումը: Այդ ամենը հնարավորութիւն չունենի տարբերակների համադրմամբ ու տարաբնույթ վերլուծութիւններով համակողմանի ու խորը հետազոտելի վերահիշյալ ստեղծագործութիւնները:

КУЛЬТОВЫЕ ЭЛЕМЕНТЫ В АРЦАХСКИХ ВАРИАНТАХ ПЕСЕН "АЛЛИЛУЙЯ"

СВЕТЛАНА ВАРДАНИЯН

Резюме

"Аллилуйя" — культовые песни, благовещающие рождение Христа и исполняемые подростками в Сочельник. Арцахские варианты песен "Аллилуйя" своими корнями связаны в основном с армянскими, в частности, с арцахскими архаическими верованиями и культурами. Они целиком вписываются в рамки древнего культового и религиозного мировоззрения.

13 Ս. Հ ա Ր ո Ւ Թ յ ո Ւ Ն յ ա ն. Անեծքի և օրհնանքի ժանրը Հայ բանահյուսութեան մեջ, էջ 9:

CULT ELEMENTS IN THE ARTSAKH VERSIONS OF "HALELUJAH" SONGS

SVETLANA VARDANYAN

S u m m a r y

The "Halelujah" songs are ritual songs announcing the birth of Jesus Christ and are performed by little boys at Christmas Eve. The Artsakh versions of the "Halelujah" songs with their traditional sources are mainly connected with the Armenian, specifically with the Artsakh archaic beliefs, worship paraphernalia and phenomena. Their structure shows that they are entirely a product of the archaic ritual and religious world outlook.